որպէս մի օրինակելի երևոյթ, որը ցոյց է տալիս, որ կան այնուամենայնիւ դպրոցի բարւոքման նախանձախնդիր անձնաւորութիւններ, որ յոյս կայ մօտ ապագայում դպրոցները և կրթական գործը աւելի բարւոք հիմերի վրայ դնել։

Դասախօսութիւնը տեղի ունեցաւ պրոցի բակում։ Հեռաձայնել էին 30—40 ունկնդիրներ։ Սպասելի էր, որ դասախօսութիւնը աւելի լայնող լինէր, քան եղաւ։

Զգիտենք թէ ինչ նպատակով դասախօսութեան ընթացքում կարդում էր ֆրանսերէն և գերմաներէն ցիտատներ, որոնք շատ աւելի ֆասում, քան օգնում էին լաւ հասկանալուն։ Սակայն պէտք է ասել, որ դասախօսի ցանկութիւնները անկեղծ են։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ մարերի փոխանակութիւն՝ թէ ինչ միջոցներով կարելի է բարելաւել կրթական գործը Սալմաստում։ Ցայտնեցին զանազան կարծիքներ. վերջը խօսողները յանգեցին այն մտքին, որ Սալմաստի բոլոր գիւղերում կազմուեն երիտասարդական խմբակներ, որոնց պարտականութիւնը պէտք է լինի բարոյական աջակցութիւն ցոյց տալ ժողովրդին և տեղական ինքնավար մարմիններին կրթական գործի բարելաւումը յայտնի կերպով առաջ տանելու համար։ Դեղեցիկ որոշում. բայց երկար ժամանակ չի անցել և կարծէք դասախօսութեանը ներկայ գտնուողները ամեն ինչ մոռացութեան են տուել։ Միշտ էլ այդպէս է Սալմաստի երիտասարդութիւնը.—խօսող և լաւ ծրագրեր յայտնող, սակայն իրօք ինքներս ու անշարժ։

Աբրահամ Գուլոյեանց

ՊԵՏԱԿԱՆ IV ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՒԱՌՈՒՄ

—

Կաս, 22 սեպտեմբերի

Ամսոյ 27-ին նշանակած է Պետական IV Դումայի Կարսի պատուիրակի ընտրութիւնը, որը Բաթումի և Օզուրգէթի շրջանների պատուիրակների հետ միասին, Բաթումում ընտրուու են մի պատգամաւոր Պետական IV Դումայի համար։ Զայցած ընտրութիւնների այդ ասպիսան սահմանափակ ձևին, որով հնարաւորութիւն չէ տրուում հասարակական շատ խաւերին լայն մասնակցութիւն ունենալ ընտրութիւններին ու ընտրել իւրաքանչիւր շրջանից իր պատգամաւորը—որպէս զի վերջինս արտայայտիչ լինի տեղային ցաւերին այնուամենայնիւ կարսեցիները պարտաւոր են որոշ հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի ընտրութիւնները, որովհետև յիշեալ երեք շրջանի կողմից ընտրուած պատգամաւորից է կախուած Դումայ անցկացնել մի շարք խնդիրներ որոնք կապ ունեն Կարսի անտեսական զարգացման ու առաջադիմութեան հետ, և որի վերջնական լուծումը կախուած է Դումայից։ Այդ այդպէս լինելով հանդերձ, կարսեցիները իրենց յատուկ անտարբերութեամբ որոշ հետաքրքրութիւն չեն ցոյց տալիս դէպի ընտրութիւնները և չը նայած որ ընտրութիւնների նախորեակին նեռ պարում, բայց դեռ մինչև օրս ոչ մի նախապատրաստական կամ խորհրդակցական ժողով ընտրութիւնների առթիւ չէ կատարել։ Եթէ դրութիւնը այդպէս շարունակելու լինի, հաւանական է որ անցած տարիների նման ընտրի տեղային պայմաններին ու ցաւերին ոչ գիտակ ու պատրաստուած անձնաւորութիւն, որը բացի այն որ չպիտի անցկենայ պատուիրակների ժողովում որպէս պատգամաւոր, նոյն իսկ չպիտի կարողանայ մանդատներ տալ կամ հասկացնել ընտրող պատգամաւորին տեղային ցաւերն ու կարիքները։ Անհրաժեշտ է որ կարսեցիները—լուրջ վերաբերուեն դէպի ընտրութիւնները, մի կողմ դնելով իրանց անտարբերութիւնը—ընտրեն այնպիսի պատուիրակ, որը հաւանական թեկնածու լինի Դումայ գնալու համար և այդպիսին կարան ունի, իսկ հակառակ պարագային գոնէ կարողանայ հասկացնել ընտրող պատգամաւորին տեղային ցաւերն ու կարիքները։ Ժամանակը շատ կարճ է. անհրաժեշտ է լուրջ վերաբերմունք, որովհետև, կրկնում ենք մէջ տեղում կան հարցեր, որ կապ ունեն Կարսի անտեսական զարգացման ու առաջադիմութեան հետ ինչպիսին են օրինակ՝ ինքնավարութիւն մտցնելու և էքսպլապատ կալ հարցեր... Դէպի գործ.—այդ է պահանջում կարսեցու շահերը։

Ց. Մկրտումեան

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

◆ Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ հայ տպագրութեան 400 ամեայ յոբելեանի Թիֆլիզի Ցանձնաժողովը իր ամսոյս 22-ին հերթական նիստում որոշել է՝ ընդհանուր ժողով հրաւիրել իրան ընտրող Թիֆլիզի բոլոր հայ հասատատութիւնների ներկայացուցիչներից և առաջարկել նրանց, որ աշքի առաջ ունենալով հայերի ներկայ ծանր վիճակը Տաճկաստանում և ռուսահայերի յուզած զրուցիները, տաւերի գիւտ և տպագրութեան յոբելեանը յետաձգել անորոշ ժամանակով։

◆ Ինչպէս լսում ենք, Ցարելեանական Ցանձնաժողովի նախագահ բժ. Ա. Զարգարեանը դատի է հրաւիրում „Մշակի" խմբագիր պ. Համբ. Առաքելեանին՝ զրպարտութեան համար։

◆ Կովկասի Փոխարքան այս սեպտեմբերի 27-ին մեկնում է Պետերբուրգ։

◆ Այս օրերս Թիֆլիզում սպասւում է մոնիտորների խորհրդի նախագահ Կոկովցովը։

◆ Փոստի վրայ տեղի ունեցած յարձակման առիթով երէկ մինչև երեկոյ կատարւում էին ամենախիստ խուզարկութիւններ, որոնք դեռ ևս շարունակւում են։ Կասկածով ձերբակալած են մի քանի հոգի։ Սպանուած երեք սարժենիներն են—Սուխօպարով, Ադամաշվիլի և Գոմպանեց. իսկ կառապանի ազգանունն է Մտեփանեան։ Վիրաւորուած թղթատարը Բերլին է, իսկ սարժենիը՝ Բարաքանշիկով։

◆ Այս տարի լրանում է դերասան Արշակ Ցարութիւնեանի բեմական գործունէութեան 25-ամեակը։

◆ Վարվարա Կրամիան դիմել է պ. Նահանգապետին՝ խնդրելով թոյլ տալ իրան հրատարակելու Թիֆլիզում գիտական-ժողովրդական մի հանդէս՝ «Էնցիկլոպեդիա» անունով—Թերթը լոյս կրտսեսի շաբաթը երկու անգամ։

◆ Արտաղպրոցական ընդհ. կրթութեան կուրսերում գրել են մինչև այժմ 95 հոգի, որի 50%-ը անցեալ տարւայ յաճախողներից են։ Զբաղմունքներն սկսւում են սեպտ. 24-ից, երեկ. 6—8-ը. երբեմն մինչև 9-ը։ Կուրսերը բացած են Զիրբէկեան փողոց № 29։

◆ Կովկ. լեռնային վարչութեան գլխաւորը Ն. Ն. Ժակը իր ծառայութեան վերաբերեալ գործերով մեկնում է Երևանի Կարսի նահանգները նրա պարտականութիւնները կը կատարէ իր օգնական Մ. Ի. Զինգարին։

◆ Առաջարկութիւն է եղել այգեգործական դպրոցի համար ձեռք բերել մի նոր հողաբաժին, իսկ շէնքը դարձնել կենտրոնական գիւղատնտեսական փորձավայր՝ Անդրկովկասի համար, որ կունենայ գիւղատնտ. բոլոր հիւղերի վերաբերեալ գիտական կաբինետներ։

◆ Վրաց «Կոլխիդա» լրագիրը ենթարկուած է 500 ռ. տուգանքի։

◆ Թիֆլիզում հրատարակող „Русское Дѣло" լրագրի սեպտ. 23-ի 7-րդ համարը գրաւած է «Մարդասիրական-քաղաքականութիւն» յոդուածի համար։

◆ Կովկասի Փոխարքայի կողմից թոյլատրուած է Կովկասի բժիշկի վրայ խաղալ „Կանացի գործ" մի գործ. վոդեվիլը՝ հեղինակութիւն Մամէդղարէի։

◆ Թիֆլիզի „Սոկոլ" մարմնամարզական ընկ. Ելիսաւետեան փոստում, Անդրկ. երկ. վարչութեան շէնքին մօտիկ, կազմակերպում է „Փուտբոլի" մրցութիւն։ Առաջին մրցութիւնը տեղի կունենայ սեպտ. 25-ին, երեկ. 4 ժամին։ Մուտքը ձրի է։

◆ Սեպտ. 30-ին Խարբերդում կը բացի մանկեղականների զրաղարանը։

◆ Գոստ-հեռագր. գլխաւոր Մոսկէթիւրը մեկնել է Հիւս. Կովկաս՝ վերաքննութեան ենթարկելու անդրկովկ. երկաթուղու կայարանները և պոստային վագոնների գործունէութիւնը։

◆ Ոստիկանութիւնը յատուկ ջանքեր է գործ դնում՝ քաղաք մթերքներ բերող գիւղացիներին ընդառաջ գնացող միջնորդ գնողների դէմ։ Երէկ շուրջկալով ձերբակալած են դրանցից մի քանիսը։

◆ Սեպտ. 22-ի երեկոյեան Մարիա Սոլոմոնովի 40 տարեկան անդորդ մի կնոջ անյայտ, բայց վայելուչ արտաքինով մէկը, խոստանալով գործ տալ, տանում է նրան Հալաթար և իջեցնելով քուռի ափին թաղնած մի տեղում, բռնաբարում է։ Նրանից յետոյ յայտնւում են ուրիշ չորս հոգի, որոնք հերթով կատարում են նոյնը։ Ոստիկանութիւնը տեղեկանալով այդ մասին, միջոցներ ձեռք առաւ և ուրէնն գտնուած են բռնաբարողներից երկուսը, երիտասարդ տղաներ՝ Գորելաշվիլի և Օրտվիձէ։

◆ Հայուհեաց Որբանոցում ընկերութեան վարչ. տուցաւ պ. Միքայէլ Ա. Սուլթանովը՝ ի յիշատակ հանգուցեալ

ԿՈ

Մեզ բարոյ ընդհան. Վերսկ կը տ բրին.

Գազ կայաց տաքի կան Գ բերու

Ժող քեր բաւ

Ընտ 11 թ բրի ձայն թեր

Շուտ տես թեր յոբ սին...

Զայ ժող ան

Ամ 10 ր ան է ի

Ամ ան ան ան